Հավելված
Հաստատված է
«Բնակարան երիտասարդներին»
վերաֆինանսավորում իրականացնող
վարկային կազմակերպություն
փակ բաժնետիրական ընկերության
խորհրդի 2013թ. փետրվարի 11-ի թիվ 02 Լ որոշմամբ

«ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ» ՎՎԿ ՓԲԸ

Մ Ո Ն Ի Տ Ո Ր Ի Ն Գ Ի Կ Ա Ր Գ

Երևան 2013

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) մշակվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին և «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ներքին կանոնակարգերին համապատասխան:

1.2. Կարգը հանդիսանում է Ընկերության ներքին կանոնակարգ, որով սահմանվում են Ընկերության կողմից մոնիտորինգի իրականացման նպատակը, մոնիտորինգի ուղղությունները, ընթացակարգը, պարբերականությունը, մոնիտորինգի արդյունքների ամփոփման ընթացակարգը:

1.3. Սույն կարգի իմաստով մոնիտորինգ է համարվում Ընկերության կողմից վերաֆինանսավորված վարկերի մոնիտորինգը/ստուգումը, Ընկերության հետ համագործակցող առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների (այսուհետ՝ Գործընկեր ֆինանսական հաստատություն կամ ԳՖՀ) գործունեության պարբերական վերլուծությունները, ինչպես նաև ԳՖՀ-ների կողմից Ընկերություն ներկայացվող հաշվետվությունների ուսումնասիրությունը/ստուգումը:

1.4. Մոնիտորինգի իրականացման միջոցով Ընկերությունը նպատակ ունի՝

1.4.1. Զսպել Ընկերության հնարավոր ռիսկերը,

1.4.2. Հավաստիանալ, որ ԳՖՀ-ներն առաջնորդվում են Ընկերության կողմից սահմանված չափանիշներով և պահանջներով վերաֆինանսավորված վարկերի գործողության ընթացքում,

1.4.3. Ստուգել ԳՖՀ-ների կողմից Ընկերություն ներկայացված տեղեկատվության արժանահավատությունը,

1.4.4. Պարբերաբար ուսումնասիրել ԳՖՀ-ների ֆինանսական վիճակը, որի արդյունքում հնարավոր կլինի որոշում կայացնել տվյալ ԳՖՀ-ի հետ հետագա համագործակցության և վարկավորման ծավալների վերաբերյալ:

1.5. Ընկերության կողմից իրականացվող մոնիտորինգն ըստ ուղղվածության բաժանվում է 2 հիմնական մասերի՝

1.5.1. Ընկերության կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի մոնիտորինգ, որն իրականացվում է ԳՖՀ-ների տարածքում (տեղերում մոնիտորինգ/on-site monitoring), և

1.5.2. ԳՖՀ-ների կողմից Ընկերություն ներկայացվող պարբերական հաշվետվությունների ուսումնասիրություն և համեմատում Ընկերության տվյալների հետ, ԳՖՀ-ների գործունեության վերլուծություն հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրության միջոցով (off-site monitoring):

1.6. Մոնիտորինգի գործընթացը կազմակերպում և իրականացնում է Ընկերության մոնիտորինգի մասնագետը: Ելնելով մոնիտորինգի ծավալներից՝ գործադիր տնօրենի հանձնարարականով մոնիտորինգի գործընթացին կարող են մասնակցել նաև Ընկերության այլ աշխատակիցները:

ԳԼՈՒԽ 2. ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԱԾ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ (ON-SITE MONITORING)

2.1. Ընկերության կողմից վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի մոնիտորինգը յուրաքանչյուր ԳՖՀ-ի գծով որպես կանոն իրականացվում է տարեկան պարբերականությամբ: Ընկերության գործադիր տնօրենի որոշմամբ/կարգադրությամբ առանձին ԳՖՀ-ների համար կարող է սահմանվել մոնիտորինգի իրականացման այլ պարբերականություն՝ պայմանավորված վերջիններիս ընդհանուր գործունեության արդյունավետության ցուցանիշների և/կամ վերաֆինանսավորված վարկերի որակի փոփոխությամբ, ինչպես նաև Ընկերության և ԳՖՀ-ի համագործակցության վրա ազդող այլ գործոններով:

2.2. Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 15-ը ներառյալ Ընկերության մոնիտորինգի մասնագետը կազմում է հաջորդ տարվա ընթացքում տեղերում մոնիտորինգի իրականացման ժամանակացույցն ըստ ԳՖՀ-ների՝ նշելով մոնիտորինգի ենթակա հիփոթեքային վարկերի մոտավոր քանակը և մոնիտորինգի իրականացման ժամկետները, և ներկայացնում Ընկերության գործադիր տնօրենի հաստատմանը: Ժամանակացույցը կազմելիս հաշվի է առնվում ԳՖՀ-ների ակտիվության աստիճանը, նախկինում վերաֆինանսավորված վարկերի ծավալը և որակը: Մեկ ԳՖՀ-ի գծով տեղում իրականացվող մոնիտորինգի առավելագույն ժամկետը սահմանվում է 20 աշխատանքային օր, որն անհրաժեշտության դեպքերում հնարավոր է երկարաձգել ևս 20 աշխատանքային օրով :

2.3. Մոնիտորինգի իրականացման գործընթացը բաղկացած է երեք մասից՝

2.3.1. Նախապատրաստական աշխատանքներ,

2.3.2. Վարկային փաթեթների՝ տեղերում ստուգումների իրականացում,
2.3.3. Մոնիտորինգի արդյունքների ամփոփում:

2.4. Մոնիտորինգի իրականացման նախապատրաստական աշխատանքները հետևյալն են.
2.4.1. Կազմվում է մոնիտորինգի ենթակա հիփոթեքային վարկերի ցուցակը նախապես ընտրված ԳՖՀ-ի գծով (ԳՖՀ-ի ընտրությունը կատարվում է համաձայն մոնիտորինգի հաստատված ժամանակացույցի),
2.4.2. Ընկերությունը մոնիտորինգը սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցում է ընտրված ԳՖՀ-ին մոնիտորինգի իրականացման աշխատանքները սկսելու վերաբերյալ՝ կցելով մոնիտորինգի ենթակա վարկերի ցուցակը: Գրավոր ծանուցման մեջ նշվում է մոնիտորինգն իրականացնող աշխատակցի/աշխատակիցների անունը, ազգանունը և անձնագրային տվյալները:
2.4.3. Ընկերության գրավոր ծանուցումը ստանալուց հետո ԳՖՀ-ն ծանուցման մեջ նշված ժամկետում պետք է Ընկերությանը ներկայացնի հիփոթեքային վարկավորման և մոնիտորինգի իրականացման վերաբերյալ իր ներքին կարգերը (էլեկտրոնային տարբերակով), կենտրոնացնի մոնիտորինգի ենթակա վարկերի փաթեթներն իր գլխամասում, և ապահովի դրանց հասանելիությունը Ընկերության համապատասխան աշխատակցին/աշխատակիցներին: Տեղերում մոնիտորինգն սկսելուց առաջ Ընկերության համապատասխան աշխատակից/ներն ուսումնասիրում են վերոնշյալ կարգերը:

2.5. Վարկային փաթեթների՝ տեղերում ստուգումները ներառում են հետևյալ աշխատանքները.
2.5.1. ՈՒսումնասիրվում են ԳՖՀ-ների կողմից ներքին մոնիտորինգի իրականացման ձևն ու արդյունքները:
2.5.2. ՈՒսումնասիրվում է վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի նպատակայնությունը փաթեթներում առկա փաստաթղթերի (ներքին մոնիտորինգի արձանագրություններ, կցված լուսանկարներ) միջոցով: Անհրաժեշտության դեպքում Ընկերությունը ԳՖՀ-ից կարող է պահանջել վարկի նպատակայնությունը հիմնավորող այլ փաստաթղթեր: Ընտրանքային եղանակով կատարվում են այցելություններ վարկառուների բնակարաններ կամ բնակելի տներ: Ընտրանքը հիմնականում կազմվում է խոշոր վարկերից /10մլն. ՀՀ

դրամից բարձր պայմանագրային գումարով/, և այն վարկերից, որոնց գծով ԳՖՀ-ի կողմից ներքին մոնիտորինգ չի արվել կամ թերի է արվել:

2.5.3. Ստուգվում է վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի ապահովագրական վկայագրերի գործողության ժամկետները/վերակնքման փաստը:

2.5.4. Վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի վարկային քաղվածքների միջոցով ուսումնասիրվում է վարկառուների պարտաճանաչությունը և վարկերի ռիսկի դասը հաշվետու օրվա դրությամբ: Քաղվածքների միջոցով ստուգվում են վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ համեմատելով այդ մնացորդային գումարները ԳՖՀ-ի կողմից Ընկերություն ներկայացվող պարբերական /ամսական/ հաշվետվությունների հետ:

2.5.5. Պատահական ընտրանքի եղանակով ստուգվում է վերաֆինանսավորված հիփոթեքային վարկային փաթեթներում առկա փաստաթղթերի համապատասխանությունը Ընկերության և ԳՖՀ-ի աշխատակիցների կողմից երկկողմ ստորագրված փաստաթղթերի ստուգման ակտերի/ցանկերի հետ:

2.5.6. Ընտրանքային եղանակով հաշվարկվում են վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի ՄԵ (PTI), ԸՊԵ (OTI) և Վ/Գ (LTV) գործակիցներն ըստ հիմնավորող փաստաթղթերի (ընտրանքի մեջ ներառվում են սահմանային եզրին մոտ ցուցանիշներով հիփոթեքային վարկերը):

2.5.7. Ըստ անհրաժեշտության կարող են կատարվել նաև այլ ուսումնասիրություններ՝ կապված վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի առանձնահատկությունների հետ:

2.6. Մոնիտորինգի արդյունքների ամփոփումը ներառում է հետևյալը.

2.6.1. Մոնիտորինգի իրականացումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում մոնիտորինգի մասնագետը պատրաստում է համապատասխան հաշվետվություն մոնիտորինգի արդյունքների ամփոփման վերաբերյալ՝ ներառելով իր եզրակացություններն ու առաջարկությունները, և ներկայացնում Ընկերության գործադիր տնօրենին (մոնիտորինգի վերաբերյալ հաշվետվության օրինակելի ձևը ներկայացված է Կարգի հավելված 1-ում):

2.6.2. Ընկերությունը մոնիտորինգի արդյունքների ամփոփումը կից գրությամբ ուղարկում է ԳՖՀ-ին, և անհրաժեշտության դեպքում կազմակերպում արդյունքների քննարկում:

2.6.3. Եթե մոնիտորինգի ընթացքում հայտնաբերված թերությունների արդյունքում վերաֆինանսավորված որոշ հիփոթեքային վարկեր համարվում են ոչ որակավորված և մոնիտորինգի տեղեկանքի պատրաստման օրվա դրությամբ չկան թերությունների շտկման համապատասխան հիմքեր, ապա Ընկերությունը գրավոր ծանուցմամբ ԳՖՀ-ից պահանջում է տվյալ վարկերի փաստացի մնացորդային գումարի ամբողջական հետ վճարում առաջիկա վճարման օրը: Կապված հայտաբերված թերությունների բնույթից, ծավալից և հաճախականությունից՝ Ընկերության գործադիր տնօրենի որոշմամբ ԳՖՀ-ին կարող է տրվել խելամիտ ժամկետ թերությունները վերացնելու նպատակով:

2.7. Վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի երկրորդ և հաջորդող տարիների մոնիտորինգն իրականացվում է համաձայն Կարգի 2.5.3., 2.5.4., 2.5.5. և 2.5.7. կետերի: Կապված հաջորդական մոնիտորինգի ենթակա հիփոթեքային վարկերի քանակից՝ երկրորդ և հաջորդող տարիների մոնիտորինգը կարող է իրականացվել ընտրանքային եղանակով՝

2.7.1. Եթե մոնիտորինգի ենթակա վարկերի քանակը փոքր կամ հավասար է 20-ի, ապա մոնիտորինգն իրականացվում է բոլոր վարկերի գծով,

2.7.2. Եթե մոնիտորինգի ենթակա վարկերի քանակը մեծ է 20-ից, ապա այդ վարկերից կազմվում է ընտրանք (վարկերի քանակի 10%-20%-ը, սակայն ոչ պակաս քան 20 վարկ): Ընտրանքը կազմվում է խոշոր վարկերից (10 մլն ՀՀ դրամից բարձր), ընթացիկ խնդրահարույց վարկերից և տարբեր նպատակայնություն ունեցող վարկերից:

2.8. Մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը ներառյալ մոնիտորինգի մասնագետը պատրաստում է հաշվետվություն նախորդ ամսվա վերջի դրությամբ Ընկերության պահանջով ամբողջությամբ հետ վճարված հիփոթեքային վարկերի վերաբերյալ ըստ յուրաքանչյուր ԳՖՀ-ի (հաշվետվության օրինակելի ձևը ներկայացված է Կարգի հավելված 2-ում): Եթե տվյալ ԳՖՀ-ի գծով վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի պայմանագրային ծավալի 5%-ից ավելին (վարկային Ընկերությունների համար՝ 3%-ից ավելին) 90 օրից ավել ժամկետանց է դառնում կամ մոնիտորինգի արդյունքներով այլևս չի հանդիսանում Որակավորված, ապա Ընկեությունը կարող է որոշակի ժամկետով (կամ անժամկետ) որոշակի սահմանափակումներ կիրառել այդ ԳՖՀ-ի նկատմամբ:

Սահմանափակումների ձևը և գործողության ժամկետը սահմանվում է Ընկերության խորհրդի որոշմամբ:

ԳԼՈՒԽ 3. ԳՖՀ-ՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ (OFF-SITE MONITORING)

3.1. Ընկերության կողմից իրականացվող ԳՖՀ-ների հեռակա մոնիտորինգը բաղկացած է երկու մասից.

3.1.1. ԳՖՀ-ների կողմից Ընկերություն ներկայացվող պարբերական հաշվետվությունների/տվյալների ուսումնասիրություն և համեմատում Ընկերության տվյալների հետ:

3.1.2. ԳՖՀ-ների գործունեության ուսումնասիրություն:

3.2. 3.1.1. կետում նշված աշխատանքների միջոցով Ընկերությունը հեռակա կարգով ստուգում է վերաֆինանսավորված վարկերի քանակը, մնացորդները, ռիսկի դասը, ժամկետանցությունը, (ապահովագրական վկայագրերի վերակնքումը՝ եռամսյակային կտրվածքով) (ԳՖՀ-ն պետք է էլեկտրոնային եղանակով CBAnet համակարգով Ընկերությանը ներկայացնի բոլոր վերակնքված ապահովագրական վկայագրերի վերաբերյալ հաշվետվություն Excel ֆորմատով, յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 05-ը), Ընկերության կողմից ԳՖՀ-ին տրված վարկերի մնացորդները և այլն:

3.3. ԳՖՀ-ների գործունեության ուսումնասիրությունն իրականացվում է եռամսյակային կտրվածքով՝ ԳՖՀ-ների հրապարակվող եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների, կից ծանոթագրությունների և հիմնական տնտեսական նորմատիվների մասին հաշվետվությունների հիման վրա:

3.4. 3.3. կետում նշված ուսումնասիրությունը ներառում է հետևյալ ենթաբաժինները.

3.4.1. ԳՖՀ-ի հաշվապահական հաշվեկշռի հաշվետու եռամսյակի տվյալների և ընդհանուր դինամիկայի ուսումնասիրություն,

3.4.2. ԳՖՀ-ի ֆինանսական արդյունքների հաշվետու եռամսյակի տվյալների և ընդհանուր դինամիկայի ուսումնասիրություն,

3.4.3. ԳՖՀ-ի գործունեության արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների/գործակիցների հաշվարկում և համեմատում նախորդ եռամսյակ/ներ/ի տվյալների հետ,

3.4.4. ԳՖՀ-ի հիմնական տնտեսական նորմատիվների կատարման ուսումնասիրություն և համեմատում նախորդ եռամսյակ/ներ/ի տվյալների հետ:

3.4.5. Մեկնաբանություններ (լրացվում է անհրաժեշտության դեպքում)

Ուսումնասիրության օրինակելի ձևը ներկայացված է Կարգի հավելված 3-ում:

3.5. 3.3. կետում նշված ուսումնասիրությունն իրականացվում է մոնիտորինգի մասնագետի կողմից՝ ԳՖՀ-ների կողմից հաշվետվությունների հրապարակման օրվան հաջորդող 20 օրվա ընթացքում:

3.6. 3.3. կետում նշված ուսումնասիրության արդյունքների հիման վրա (հաշվի առնելով ԳՖՀ-ի գործունեության արդյունքները և զարգացման ընդհանուր միտումները/ուղղվածությունը, ֆինանսական ցուցանիշների/գործակիցների փոփոխության աստիճանը, հնարավոր ռիսկերի մակարդակը և այլն) մոնիտորինգի մասնագետը ներկայացնում է գրավոր զեկուցագիր Ընկերության գործադիր տնօրենին:

3.7. Ուսումնասիրության արդյունքներով, եթե պարզվում է, որ ԳՖՀ-ի հետ հետագա համագործակցությունը Ընկերության համար կարող է էական ռիսկեր առաջացնել, ապա այդ ԳՖՀ-ի նկատմամբ Ընկերությունը կարող է որոշակի սահմանափակումներ կիրառել, ընդհուպ մինչև համագործակցության դադարեցումը: Սահմանափակումների ձևը և գործողության ժամկետը սահմանվում է Ընկերության խորհրդի որոշմամբ:

Հավելված 1.

«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ վերաֆինանսավորված վարկերի գծով իրականացված մոնիտորինգի վերաբերյալ	
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	
Գործընկեր ֆինանսական հաստատությունը՝	
Իրականացման ամսաթիվը՝	
Մոնիտորինգի ենթարկված վարկերը՝	
Ընդհանուր տեղեկատվություն – նախաբան	
Վարկերի սպասարկում – ԳՖՀ-ի կողմից իրականացվող ներքին մոնիտորինգ	
Ընկերության կողմից կատարված մոնիտորինգ	
Ապահովագրական պոլիսներ	
Վարկառուների մարումները - ժամկետանցություն, ռիսկի դասեր	
Վերաֆինանսավորված հիփոթեքային վարկերի մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ	
Վարկային փաթեթների ամբողջականություն	
Վարկերի որակավորման համար հաշվարկվող գործակիցներ	
Եզրակացություն և առաջարկություններ	

Հավելված 2.

Հաշվետվություն «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ պահանջով ամբողջությամբ հետ վճարված հիփոթեքային վարկերի վերաբերյալ՝ ըստ ԳՖՀ-ների առ --------թ.

ԳՖՀ-ի անվանում	Պորտֆելի պայմանագրային գումար		Հետվճարված վարկերի պայմանագրային գումար			
	Ծավալ	Քանակ	Ծավալ	%	Քանակ	%
Ընդամենը						

Հաշվետվություն «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ պահանջով ամբողջությամբ հետ վճարված հիփոթեքային վարկերի վերաբերյալ առ --------թ.

Հետվճարված հիփոթեքային վարկի նույնացուցիչ	Վարկառուի անուն, ազգանուն	Հիփոթեքային վարկի պայմանագրային գումար	Հիփոթեքային վարկի փաստացի մնացորդը հետվճարման պահին	Հետվճարման ամսաթիվը	Հետվճարման պատճառը	Մարզը

Հավելված 3.

ԳՖՀ-ների գործունեության ուսումնասիրություն

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախորդ ժամանակաշրջանի Ամսաթիվ	Հաշվետու ժամանակաշրջանի Ամսաթիվ	Շեղում
ՀԱՇՎԵԿՇԻՌ	**Գումար**	**Գումար**	**%**
Ակտիվներ			
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում			
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ			
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ			
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ			
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ			
Այլ ակտիվներ			
Ընդամենը ակտիվներ			
***Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ, այդ թվում**			
*Հաճախորդներին տրված վարկերի գծով հնարավոր կորուստների պահուստ			
*Դուրս գրված վարկերի ծավալը			
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ			
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ			
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր			
Առևտրային նպատակներով պահվող պարտավորություն			
Պահուստներ			
Այլ պարտավորություններ			
Ընդամենը պարտավորություններ			
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ			
Էմիսիոն եկամուտ			
Պահուստներ՝			
Գլխավոր պահուստ			
Վերագնահատման պահուստներ			
Չբաշխված շահույթ (վնաս)			
Կապիտալի այլ տարրեր			
Ընդամենը կապիտալ			

Ընդամենը պարտավորություններ և կապիտալ			
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ			
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ			
Տոկոսային և նմանատիպ ծախսեր			
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ			
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ			
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր			
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ			
Եկամուտ շահաբաժիններից			
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից			
Այլ գործառնական եկամուտներ			
Գործառնական եկամուտներ			
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին			
Ընդհանուր վարչական ծախսեր			
Այլ գործառնական ծախսեր			
Շահույթը / (վնասը) մինչև հարկումը			
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)			
Շահույթը (վնասը) հարկումից հետո			
ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ			
ROA			
ROE			
Եկամտաբեր ակտիվներ/Ընդամենը ակտիվներ			
Զուտ շահույթ/Ընդամենը եկամուտներ			
Զուտ տոկոսային եկամուտ/Եկամտաբեր ակտիվներ			
Տոկոսային սպրեդ			
Պարտավորություններ բանկերի և ֆին. կազմ. նկատմամբ/Ընդամենը պարտավորություններ			
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ/Ընդամենը պարտավորություններ			
Ֆինանսական կախվածության գործակից (ակտիվներ/կապիտալ)			
Հիմնական միջոցներ/Ընդամենը ակտիվներ			
Վարկեր/Ընդամենը ակտիվներ			
Արժեթղթեր/Ընդամենը ակտիվներ			
Պահուստ/Ընդամենը ակտիվներ			
*(Վարկերի գծով պահուստ+Դուրս գրված վարկեր) / (Ընդամենը Վարկեր+Վարկերի գծով պահուստ+Դուրս գրված վարկեր)			
Այլ ակտիվներ/Ընդամենը ակտիվներ			

**Նշված դաշտերը լրացվում/հաշվարկվում են կիսամյակային պարբերականությամբ*

Նորմատիվներ**	ՀՀ ԿԲ սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Նորմատիվի փաստացի մեծությունը
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը		
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը		
Ն1 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը		
Ն21 Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը		
Ն2[11] Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը		
Ն2[12] ԱՄՆ դոլարով, եվրոյով և տվյալ արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և ԱՄՆ դոլարով, եվրոյով և տվյալ արտարժույթով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը		
Ն22 Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը		
Ն2[21] Բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը		
Ն2[22] ԱՄՆ դոլարով, եվրոյով և տվյալ արտարժույթով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և ԱՄՆ դոլարով, եվրոյով և տվյալ արտարժույթով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը		
Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը		
Ն32 Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը		
Ն41 Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը		
Ն42 Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը		

***Վարկային կազմակերպությունների համար լրացվում են միայն համապատասխան նորմատիվները*